Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 11th June 2023 Bulletin 26/2023

Second Sunday after Pentecost—Feast of Holy Etchmiadzin

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 9:1-10

Արդարեւ առաջին ուխտն ալ ունէր պաշտամունքի կանոններ, նաեւ աշխարհային սրբարան մը.որովհետեւ խորան մը կառուցանուած էր: Առաջինը, որուն մէջ կային աշտանակը, սեղանը եւ առաջադրութեան հացը, Սրբութիւն կը կոչուէր: Իսկ երկրորդ վարագոյրին ետեւ կար խորան մը՝ որ Սրբութիւններու սրբութիւն կը կոչուէր. անոր մէջ էին ոսկիէ բուրվառը եւ ամէն կողմէ ոսկեպատ ուխտին տապանակը, որուն մէջ կային ոսկիէ սափորը՝ մանանայով լեցուն, Ահարոնի գաւազանը՝ որ ծաղկեցաւ, եւ ուխտին տախտակները: Անոր վրայ ալ՝ փառքի քերովբէները, որ հովանի կ'ընէին Քաւութեան վրայ: Այս մասին հիմա մանրամասն խօսելու կարիք չկայ:

Ասոնք այսպէս կառուցանուած ըլլալով, քահանաները ամէն ատեն կը մտնէին առաջին խորանը՝ պաշտամունք կատարելու: Իսկ միայն քահանայապետը կը մտնէր երկրորդին մէջ, տարին մէ՛կ անգամ. բայց ո՛չ առանց արիւնի, որ կը մատուցանէր իրեն համար, նաեւ ժողովուրդին անգիտութեան մեղքերուն համար: Սուրբ Հոգին սա՛ կը բացայայտէր, թէ սրբարանին ճամբան յայտնաբերուած չէր, քանի դեռ կը կենար առաջին խորանը, որ նախատիպար մըն էր ներկայ ատենին համար: Անոր մէջ կը մատուցանուէին ընծաներ ու զոհեր, որոնք չէին կրնար կատարեալ ընել պաշտամունք կատարողը՝ խղճմտանքին հանդէպ. հապա՝ կերակուրներով, խմելիքներով եւ տարբեր լուացումներով՝ միայն մարմնաւոր կանոններ էին, որոնք կը պարտադրուէին մինչեւ ուղղումի ատենը:

The Epistle of St Paul to the Hebrews 9:1-10;

Worship in the Earthly Tabernacle

Now the first covenant had regulations for worship and also an earthly sanctuary. A tabernacle was set up. In its first room were the lampstand and the table with its consecrated bread; this was called the Holy Place. Behind the second curtain was a room called the Most Holy Place, which had the golden altar of incense and the gold-covered ark of the covenant. This ark contained the gold jar of manna, Aaron's staff that had budded, and the stone tablets of the covenant. Above the ark were the cherubim of the Glory, overshadowing the atonement cover. But we cannot discuss these things in detail now.

When everything had been arranged like this, the priests entered regularly into the outer room to carry on their ministry. But only the high priest entered the inner room, and that only once a year, and never without blood, which he offered for himself and for the sins the people had committed in ignorance. The Holy Spirit was showing by this that the way into the Most Holy Place had not yet been disclosed as long as the first tabernacle was still functioning. This is an illustration for the present time, indicating that the gifts and sacrifices being offered were not able to clear

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

the conscience of the worshiper. They are only a matter of food and drink and various ceremonial washings—external regulations applying until the time of the new order.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 10:22-30

Այդ ատեն Երուսաղէմի մէջ Նաւակատիքի տօնը կը կատարուէր՝, ու ձմեռ էր. Յիսուս կը քալէր տաճարին մէջ՝ Սողոմոնի սրահը: Ուստի Հրեաները շրջապատեցին զինք եւ ըսին իրեն. «Մինչեւ ե՞րբ պիտի մտատանջես մեզ. եթէ Քրիստոսը դո՛ւն ես՝ բացորոշապէս ըսէ՛ մեզի»:

Յիսուս պատասխանեց անոնց. «Ըսի՛ ձեզի, ու չէք հաւատար: Այն գործերը՝ որ ես կ՚ընեմ իմ Հօրս անունով, անո՛նք կը վկայեն իմ մասիս: Բայց դուք չէք հաւատար՝ որովհետեւ իմ ոչխարներէս չէք, ինչպէս ըսի ձեզի՝: Իմ ոչխարներս կը լսեն իմ ձայնս, ես ալ կը ճանչնամ զանոնք, եւ կը հետեւին ինծի: Ես կու տամ անոնց յաւիտենական կեանքը, ու յաւիտեա՛ն պիտի չկորսուին, եւ ո՛չ մէկը պիտի յափշտակէ զանոնք իմ ձեռքէս: Իմ Հայրս՝ որ ինծի տուաւ զանոնք՝ բոլորէն մեծ է, ու ո՛չ մէկը կրնայ յափշտակել իմ Հօրս ձեռքէն: Ես եւ Հայրը մէկ ենք»:

The Holy Gospel of Jesus Christ according to John 10:22-30

Further Conflict Over Jesus' Claims

Then came the Festival of Dedication [b] at Jerusalem. It was winter, and Jesus was in the temple courts walking in Solomon's Colonnade. The Jews who were there gathered around him, saying, "How long will you keep us in suspense? If you are the Messiah, tell us plainly."

Jesus answered, "I did tell you, but you do not believe. The works I do in my Father's name testify about me, but you do not believe because you are not my sheep. My sheep listen to my voice; I know them, and they follow me. I give them eternal life, and they shall never perish; no one will snatch them out of my hand. My Father, who has given them to me, is greater than all [c]; no one can snatch them out of my Father's hand. I and the Father are one."

Ս. Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից

301 թվականին Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որը սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի: Հայոց հեթանոս Տրդատ արքայի հրամանով Հռիփսիմյան և Գայանյան կույսերը նահատակվում են: Այդ դեպքից հետո արքան ու արքունի պալատականները ծանր հիվանդանում են: Տրդատի քույրը երազ է տեսնում, որ արքայի հիվանդությունը կարող է բուժել միայն Խոր Վիրապում բանտարկված Գրիգորը: Եվ ահա 13-ամյա բանտարկությունից հետո ազատ է արձակվում հայոց ամենամեծ սուրբը:

Ս. Գրիգորի աղոթքներով ապաքինվում է արքան՝ դառնալով Գրիգոր Լուսավորչի քրիստոնեական քարոզչության լծակիցը: Քրիստոնեությունը հռչակվում է հայոց պետական կրոն: Մեծաշուք հանդիսավորությամբ Ս. Գրիգոր Լուսավորիչն ուղարկվում է Կեսարիա, ուր ձեռնադրվում է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու առաջին հովվապետ: Ս. Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից Հայ Եկեղեցու մեծ տոներից է, որը հիշատակվում է Ս. Հռիփսիմյանց և Ս. Գայանյանց տոներին հաջորդող շաբաթ օրը: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ:

Feast of St. Gregory the Illuminator's deliverance from the pit

In the year 301 AD, the deliverance of St. Gregory the Illuminator from the pit, was the catalyst that began the "Great Conversion" of Armenia from the darkness of paganism to the Light of Christianity.

Following the martyrdom of the Christian nuns, led by St. Hripsime and St. Gayane, upon the order of the Armenian pagan King Tiridates, the ruler becomes seriously ill. The sister of the king, Khosrovidoukht, has a dream where it is revealed to her that the only remedy for the king's condition is to free St. Gregory, still imprisoned in the dungeon, and that he alone could cure the malady. Thirteen years following his imprisonment in the "deep pit" of Artashat, the royal court submits to the request of Khosrovidoukht and frees the Christian Gregory. With the intercession of Gregory's prayers, the king recovers, Gregory becomes the patron saint of the Armenian Church, and Tiridates, and his wife - Queen Ashkhen, become ardent supporters in Gregory's efforts to preach Christianity throughout Armenia, and baptize the Armenian nation. Pagan temples and statues are destroyed in Armenia, and replaced with Dominical Crosses in their locations. Christianity is proclaimed by the King and the Catholicos to be the state religion of Armenia, the first nation in the world to do so. St. Gregory is sent to Caesarea, where he is consecrated as the first Pontiff of the Armenian Church, and becomes the first Catholicos of All Armenians.

The feast of St. Gregory the Illuminator's Deliverance from the Pit is one of the greatest of the Armenian Church. A solemn Divine Liturgy is celebrated in all Armenian Churches on this day.

Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի

Հայոց Եկեղեցու մեծ տոներից է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոնը: Ըստ ավանդության՝ Խոր Վիրապում բանտարկությունից դուրս գալուց հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը տեսիլք է տեսնում, ուր Միածինը, ողողված հրաշափառ լույսով, իջնում է երկնքից և ոսկե ուռով զարկում Սանդարամետի գետնափոր մեհյանը՝ ցույց տալով այն տեղը, ուր պետք է կառուցվեր հայոց սուրբ հավատի տաճարը:

Այստեղից էլ առաջացել է «Էջմիածին» անունը, այսինքն՝ էջ՝ (գրաբար) իջավ Միածինը: Ս. Գրիգոր Լուսավորիչն իր տեսիլքը պատմում է հայոց Տրդատ թագավորին: Արքայի հովանավորությամբ կառուցվում է Սուրբ Էջմիածնի՝ Աստվածածնին նվիրված Կաթողիկե մայր տաճարը: Քրիստոսի իջման տեղում էլ կառուցվում է Իջման Սուրբ Սեղանը: Էջմիածնի կառուցման աշխատանքներին ժողովրդի հետ մասնակցել են նաև Տրդատ թագավորը և Աշխեն թագուհին:

Ըստ Մաղաքիա պատրիարք Օրմանյանի «Ծիսական բառարան»-ի՝ «կաթողիկե»՝ նշանակում է աթոռանիստ մայր եկեղեցի, և այս անունը հատուկ տրվել է Էջմիածնի մայր տաճարին: Սակայն մեկ այլ իմաստով կաթողիկե են անվանել գմբեթ ունեցող բոլոր եկեղեցիներն ընդհանրապես, իսկ աստվածաբանության մեջ այդ անվանումը ներկայացնում է եկեղեցու ընդհանրականության խորհրդապատկերը: Այս երեք իմաստներն էլ համապատասխանում են Էջմիածնի մայր տաճարին, քանի որ այն աթոռանիստ եկեղեցի է, գմբեթավոր և ընդհանրական է բոլոր հավատացյալների համար:

Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը նշվում է Սուրբ Զատիկից 64 օր հետո կամ Հոգեգալստյան կիրակիին հաջորդող երկրորդ կիրակի օրը: Տոնի օրը մատուցվում է Սուրբ Պատարագ, իսկ ժամերգությունների ընթացքում այլ շարականների հետ երգվում է նաև նշանավոր «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը, որը գրել է 8-րդ դարի կաթողիկոս Սահակ Ձորափորեցին: Շարականը Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի և տաճարի կառուցման մասին է:

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Feast of the Cathedral of Holy Etchmiadzin

One of the most celebrated feasts of the Armenian Church is the day when the Cathedral of Holy Etchmiadzin was established, according to the inspired vision of St. Gregory the Illuminator.

According to tradition, and hagiographic sources, following the declaration of Christianity as the Official Religion of Armenia in 301 AD, St. Gregory has a famous vision, wherein the Only Begotten Son of God – Jesus Christ, descends from Heaven, his face lit aglow, and with the strike of a golden hammer designates the site where the Mother Cathedral for the entire Armenian nation is to be founded. Hence, the name of the spiritual center for the Armenians, "Etchmiadzin", means "the Descent of the Only Begotten" (Etch - descent, mi - only, dzin - begotten.)

St. Gregory relayed the story about his vision to the Armenian King Tiridates, under whose royal auspices and support the Cathedral of Holy Etchmiadzin was built. King Tiridates and Queen Ashkhen participated in the construction, as did the entire capital city of Vagharshapat by bringing stones from the biblical mountain of Ararat to lay the foundations. In the site marked by Christ, a Holy Altar of Descent was built.

According of Patriarch Malachia Ormanian, from the days of her establishment, the Cathedral of Holy Etchmiadzin has been the residence of the Supreme Patriarch and Catholicos of All Armenians. Thus, it is the Mother See of the Armenian Church, and as such, her universal, spiritual and administrative headquarters.

Another title bestowed upon the cathedral is "Catholic" - not to be confused with the Roman Catholic faith. Catholic is a Greek word meaning "Universal". Theologically, the cathedral has been called "catholic" as a description of the catholicity (universality) of the Church.

The feast of the Cathedral of Holy Etchmiadzin is celebrated 64 days following Easter. A Divine Liturgy is celebrated, and during services, a special hymn is sung, written by the eighth century Catholicos Sahak of Dzorap, telling of St. Gregory's vision and the Cathedral's construction.



3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.
Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Եկայք շինեսցուք սուրբ զիտորանն լուսոյ.
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարակնոց):

Քրիստոնեայ առաջին պետութեան աստուածասէր ժառանգներ,

Հայոց մեծ դարձի, ըստ Սուրբ Գրիգորի տեսիլքի՝ Աստծոյ Միածին Որդու Արարատեան դաշտ իջնելու եւ Սուրբ Էջմիածնի հիմնումի մասին պատմող այս շարականը մենք երգում ենք Սուրբ
Էջմիածնին նուիրուած բոլոր տօներին: Այսօր էլ բոլոր եկեղեցիների առաջնեկ, Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի տօնն է՝ Արարատեան շաբաթուայ տօնական շղթայի պսակը: Այս շաբաթուայ ամբողջ ընթացքում 17 դար հեռուից խօսող սուրբերի կերպարներով մեզ յիշեցնում է մեր համազգային հաւատքի ուխտը Աստծոյ հետ: Սուրբ Հռիփսիմեան եւ Գայեանեան կոյսերի նահատակութիւնը հոգեւոր ոռոգում եղաւ դարեր առաջ ցանուած սերմերի համար: Առաքեալներից սկսուած քրիստոնէական ծածուկ ալիքը մեծ ծով դարձաւ, խաւարում բանտուածի միջոցով հաւատքի կայծը մեծ հոգեւոր հրդեհ ծաւալեց: Ջրհեղեղից յետոյ մարդկութեան ֆիզիկական վերապրումի երկիրը դարձաւ նաեւ Քրիստոսի սիրոյ եւ հոգեւոր վերածնունդի ջահակիր: Կարծես մեր Հայրենիքի մասին ինչեց այս մարգարէութիւնը. *«Ես պիտի հրճուեմ Տիրոջով, որովհետեւ Նա ինձ փրկութեան զգեստ եւ ուրախութեան պատմուճան հագցրեց, որպէս փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին եւ որպէս հարսի՝ զուգեց ինձ զարդով: Տիրոջ ձեռքին վայելչութեան պսակ պիտի դառնաս, եւ քո Աստծոյ ձեռքին՝ արքայական թագ» (Ես. 61.10; 62.3):*

Մեր հաւատքի կարեւորագոյն աղբիւրը Աստծոյ յայտնութիւնն է: Ոչ թէ մեր ենթադրութիւնը, մեր մտքի արգասիքն է հաւատքը, այլ վստահութիւնը մեզ յայտնուած Աստծոյ, Որի յայտնութեան գրաւոր մասը Աստուածաշունչ Մատեանն է, իսկ բանաւոր մասը յայտնի է Սրբազան Աւանդութիւն անունով: Ամէն մարդու եւ ազգի նկատմամբ Աստուած իւրահատուկ խնամք ու սէր է տածում: Դա առաւել կերպով զգալի է հայերիս մէջ՝ սկսած առաջին լուսաւորիչներ Թադէոս եւ Բարդուղիմէոս սուրբ առաքեալների քարոզութիւնից, երկրորդ լուսաւորիչ սուրբ Գրիգորից մինչեւ մեր օրերի բազմաթիւ վկայութիւններ:

Մեր հոգեւոր կեանքը միշտ քաջալերումի, նորոգման եւ ոգեշնչումի նոր ալիքի անհրաժեշտութիւն ունի: Ամէնօրեայ աւետարանական ընթերցումներին եւ աղօթքներին զալիս են միանալու եկեղեցու տօները, երբ հաւատքի կեանքի մէջ օրինակ եղող սրբերի վարքը, խօսքերն ու կեանքը Քրիստոսով բարի պատերազմը յաղթելու ոգեւորիչ օրինակներ են դառնում մեզ համար. *«Ինչ ձեզ ասում եմ խաւարի մէջ, դուք ասացէք լոյսի՛ մէջ. եւ ինչ լսում էք ականջի մէջ փսփսուքով, հրապարակեցէ՛ք տանիքների՛ վրայից. Եւ մի՛ վախեցէք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող» (Մատթ. 10.27)*: Տօները, յիշեցնելով անցեալի վկայութիւնները եւ Աստծոյ խնամքի յայտնի դէպքերը, մեր մէջ արթուն են պահում հաւատքի ջերմեռանդութիւնը՝ շարունակելու մնալ երկնքի ուխտաւորներ:

Արարատեան շաբաթը բացւում է սուրբ Հռիփսիմէի եւ 32 սուրբ կոյսերի նահատակութեան յիշատակումով: Սուրբ Հռիփսիմէն կանացի նուրբ մարմնի մէջ Քրիստոսի Հոգով անգամ արքային յաղթելու զօրաւոր օրինակ է, ինչպէս Առակաց գրքից է մէջբերւում իր տօնին. «*Շատ դուստրեր հարստութիւն ձեռք բերեցին, շատերն էլ սխրագործութիւններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց եւ անցար բոլորից» (Առ. 31.29)*:

Սուրբ Գայեանեն կուսանաց խմբի աւագն ու մայրապետն էր, խրատողը եւ ուսուցանողը, որ երկու ընկերակից կոյսերի հետ նահատակւում է, քանի որ Սուրբ Հռիփսիմէին աւելի է ոգեւորում՝ թագաւորին չհանձնուելու եւ Քրիստոսի հարսնացու լինելու ուխտին հաւատարիմ մնալու համար: Իր օրինակի մէջ կրկին կարեւորւում է ուսուցչի, աւագ ընկերոջ, անգամ մահուան սպառնալիքի տակ հաւատքի մէջ քաջալերողի կեպարը, որի կարիքն այսօր եւս շատերն ունեն:

Սուրբ Յովհաննէս Մկրտչի եւ Աթանագինես եպիսկոպոսի յիշատակութեամբ կարեւորւում է համաքրիստոնէական այն վարդապետութիւնը, որ Սուրբ Հոգին բնակւում է սուրբ մարդկանց մէջ եւ գործում է նրանց միջոցով ե՛ւ կենդանութեան ժամանակ, ե՛ւ ննջումից յետոյ նրանց նշխարների միջոցով: Այս է պատճառը, որ քրիստոնեաները յարգանք

ունեն ննջեցեալների մարմինների նկատմամբ եւ չեն ընդունում դիակիզումը, իսկ սրբերի մասունքների նկատմամբ առանձնայատուկ խոնարհում ունեն՝ իբրեւ Սուրբ Հոգու կրողների: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն այս երկու սուրբերի նշխարները Հայաստան բերեց եւ ամփոփեց կառուցուող եկեղեցիների հիմքում:

Սուրբ Գրիգորի՝ Խոր Վիրապից ելնելու եւ տեսիլքով Էջմիածնի Կաթողիկէն՝ Մայր Տաճարը հիմնելու տօնը Հայոց դարձի եւ աստուածային ներկայութեան կարեւոր ուղերձ է: Տեսիլքի մէջ Լուսաւորիչ հայրապետը տեսնում է ոսկէ մուրճով իջնող Աստծոյ Միածին Որդուն եւ նորահաւատ Տրդատ արքային եւ այլոց պատմում է մարգարէական տեսիլքի մասին, որը պատճառ է դառնում Կաթուղիկէ Մայր Տաճարի, Սուրբ Գայանէ, Սուրբ Հռիփսիմէ եւ Սուրբ Շողակաթ վկայարանների կառուցման: Սա է գեղարուեստօրէն նկարագրել Սահակ Ձորոփորեցի կաթողիկոսը շարականում.

Մենք ապրում ենք այս դէպքերից հազար եւ եօթ հարիւր տարիներ անց: Մենք աշխարհին ներկայանում ենք իբրեւ զաւակներ Հայաստանեայց Առաքելահիմն եկեղեցու, որի առաջին կաթողիկոսն է Սուրբ Գրիգորը, որ Լուսաւորիչ կոչուեց մեզանից, մեր ժողովրդից: Օտարներն իրեն յաճախ Հայաստանի լուսաւորիչ Գրիգոր Հայ են ասում:Թէ՛ Գայեանեանց եւ Հռիփսիմեանց կոյսերը, թէ՛ իրենցից առաջ եւ յետոյ բոլոր մարտիրոսներն ու նահատակները իւրատեսակ լուսաւորողներ եղան իրենց վկայական մահով: Սահակ-Մեսրոպեանք իրենց հաւատքի կեանքով, խորը աղօթքով եւ Աւետարանի լոյսը տարածելու ինքնայրումով հայ հոգու լուսաւորիչներ եւս կոչուեցին: Հերթը մերն է՝ հասկանալու մեր կոչումը, վերականգնուելու մեր հայրերի հաւատքի ուխտի մէջ եւ երկնքից իջած շողը մեր մէջ բերելու՝ իբրեւ առաքեալների, Լուսաւորիչ հայրապետի, սրբասուն կոյսերի եւ կեանքով վկայութիւն տուած մեր նախնիների ժառանգներ: Քրիստոսի խօսքը աներկբա է. *«Ով որ ինձ կիսաստովանի մարդկանց առաջ, ես էլ կիսաստովանեմ նրան իմ Հօր առաջ, որ երկնքում է» (Մատթ.10.32):*

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

12 June	The Holy Children of Bethlehem, Acacius the Martyr, Mucius the Priest, and Codratus the Soldier, Proverbs 29:2-7; Isaiah 18:7; Hebrews 2:14-18; Matthew 2:16-18
13 June	Sts. Nooneh and Maneh the Virgins Song of Songs 8:14-24; Isaiah 27:11-13; 1 Peter 5:8-11; John 12:24-26
14 June	Romans 4:13-22; Matthew 10:34-42
15 June	Sts. Sahag and Hovsep the Princes and Sts. Sarkis and Pacchus the Martyrs Proverbs 6:1-5; Isaiah 33:5-8; Romans 8:18-27; Luke 21:12-19
16 June	Romans 5:12-21; Matthew 11:25-30
17 June	St. Nerses the Great and Bishop Khat Wisdom 2:23-3:8; Isaiah 57:15-16; Hebrews 13:7-9; Matthew 10:16-22

Join St. Yeghiche Armenian Church Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir. For further details, please contact: services@styeghiche.org.uk

Հիշատակ Ս. Նունե և Մանե կույսերի 13-6-2023

Ս. Նունեն և **Մանեն** Հռիփսիմյանց կույսերի խմբից էին, որ Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ թողել էին Հռոմն ու եկել Հայաստան: Սակայն այս երկու կույսերին Տիրոջ կողմից նախախնամված չէր նահատակվել իրենց հավատակիցների հետ: Հայաստան հասած **37 կույսերից** զատվելով՝ Մանեն հեռանում է Եկեղյաց գավառի Սեպուհ լեռը, որտեղ փակվելով մի քարայրում՝ ճգնում է: Այսպես Մանե կույսն «**հրեշտակային կյանքով**», աղոթքով և աստվածային մխիթարությամբ զորացած ապրում է այդ այրում, որը և հետագայում իր անունով կոչվում է «**Մանեի այր**»:

Հետաքրքրական պատմություն է հաղորդում վարքագիրը Մանեի վերջին օրերի մասին: Այդ ժամանակաշրջանում Ս. Գրիգոր Լուսավորիչն էլ է կամենում հեռանալ հասարակությունից և իր կյանքի վերջին օրերն ապրել առանձնության մեջ: Այդ ներշնչումով Հայոց հայրապետը գալիս է **Դարանաղյաց լեռներ** և իբրև բնակության վայր ընտրում Սեպուհ լեռան քարայրը, ուր ճգնում էր Մանեն: Երբ մոտենում է այրին, Մանեի ձայնն է լսում, որ պատվիրում է Ս. Գրիգորին երեք օրից վերադառնալ իր ընտրած քարայրի մոտ: Կատարելով սրբի ցանկությունը՝ հայրապետը վերադառնում է երեք օրից և սրբուհուն վախճանված գտնելով՝ սաղմոսներով թաղում է նրան քարայրում (**323թ**.): Իսկ Նունե կույսը (վրաց. աղբյուրներում՝ Նինո) հայոց Տրդատ թագավորի հալածանքներից ազատվելով՝ մեկնում է Վրաստան, Մծխիթա մայրաքաղաքը, ուր շարունակում է ապրել սրբակենցաղ աղոթական կյանքով, քարոզում և ողջ ժողովրդին դարձի բերում:

Գործած հրաշքների և բարեգործությունների համար կույսին տանում են արքունիք, ուր բժշկում է հիվանդ թագահուն, ապա հրաժարվելով բոլոր թանկարժեք նվերներից, քարոզում Տիրոջ Ավետարանը: Միհրան թագավորը ևս անմիջապես իր վրա զգալով անծանոթ Աստծու զորությունը, դարձի է գալիս: Ավետարանը քարոզվում է նաև երկրի մեծամեծերին: Այս ամենի արդյունքում Նունեի խորհրդով պատվիրակություն է առաքվում Ս. Գրիգոր Լուսավորչին և Տրդատ թագավորին՝ խնդրանքով, որ հոգևորականներ ուղարկեն իրենց երկիր՝ մկրտություններ կատարելու և սպասավորելու ժողովրդին: Այսպիսով սուրբ Նունեն դառնում է Վրաստանի առաքելուհին:

Serve the church and your community as a deacon, sub-deacon or acolyte

Join us in the celebration of the Divine Liturgy (Badarak) in the Armenian churches in the UK and become an altar server. Deepen your faith and discover your talents by learning the deacons' duties and singing the Armenian hymns.

No prior experience or knowledge is needed. The clergy will help you build your confidence and proficiency in singing and chanting. Deacons and altar servers join the Primate and clergy during visits to mission parishes across the United Kingdom.

We look forward to welcoming everyone to serve as Deacons. Your presence will expand and enrich our altar. For further details, please contact: services@styeghiche.org.uk

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Nover Boghosian for the soul of her Husband and Boghosian Sisters and Brothers and their Families, for the soul of their loving Father, Grandfather and Great-grandfather the late **HAMPARTSUM BOGHOSIAN,** on the 6th anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **BOGHOSIAN** and **SOSSIKIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

Hokehankist and in Liu of Flowers:
Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.